ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » 2019 թ. **N**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Խ-118-25.04.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-118-25.04.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում է հետևյալը՝

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելվածի 17-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը մշակում և իրականացնում է հարկաբյուջետային՝ պետության եկամուտների ձևավորման և ծախսման, հանրային ֆինանսների կառավարման, (...) ոլորտներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կանոնադրության 10-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ նախարարության խնդիրներից է պետության գույքային շահերի պաշտպանությունը, իսկ 11-րդ կետի 15-րդ ենթակետի «բ», «գ» «դ» պարբերությունների համաձայն՝ նախարարությունն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով պետության գույքային շահերի պաշտպանության ոլորտում իրականացնում է հետևյալ գործառույթները՝

բ. պայմանագրային կամ այլ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հիմքով Հայաստանի Հանրապետությունից գումարի բռնագանձման պահանջով նախարարության, այլ պետական մարմնի կամ հիմնարկների դեմ հայցերով դատարանում որպես պատասխանող կամ որպես երրորդ անձ ներգրավվելը, ինչպես նաև պետության այլ գույքային շահերի պաշտպանությունը,

գ. պետական մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, հետաքննության, նախաքննության մարմինների, դատախազության կամ դատարանի գործողությունների հետևանքով քաղաքացիներին, իրավաբանական անձանց պատճառված վնասի հատուցման պահանջներով ընդդեմ պետությանը ներկայացված հայցերով դատարանում որպես պատասխանող կամ որպես երրորդ անձ հանդես գալը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից հատուցման դեպքում (ներառյալ դատական ծախսերը) պետության հետադարձ պահանջները գնահատելը և ներկայացնելը,

դ. վարչական դատարան ներկայացվող՝ վարչական մարմինների դեմ հայցադիմումների հաշվառումը, ներկայացվող պահանջների ու վարչական մարմինների վիճարկվող վարքագծի վերլուծությունը և առաջարկներ ներկայացնելը:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության 74-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ գործով որպես պատասխանող հանդես է գալու վարչական մարմինը կամ պաշտոնատար անձը, հայցվորը հայցադիմումի և դրան կցվող փաստաթղթերի պատճենն ուղարկում է նաև պետական ֆինանսների կառավարման մարմին:

Վերոգրյալ նորմերի համակարգային վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության 74-րդ հոդվածի 2-րդ մասը միտված է նախարարության՝ պետության գույքային շահերի պաշտպանության խնդրի կենսագործման նպատակով համապատասխան գործիքակազմի ապահովմանը: Այնուամենայնիվ, ելնելով դատական պաշտպանության մատչելիության ապահովման անհրաժեշտությունից, նախագծի վերաբերյալ առարկություններ չունենք:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ նախարարությանը հասցեագրված Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ներկայացվող հայցադիմումների օրինակների հաշվառման և ուսումնասիրության արդյունքում նախարարությունը 2017-2019 թվականների ժամանակահատվածում 191 վարչական գործով դատարան է ներկայացրել երրորդ անձ ներգրավվելու մասին դիմումներ, իսկ դատարան ներկայացվող հայցերի մեծամասնությունը կազմող Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության և Երևան համայնքի որոշումների (կարմիր գծեր) անվավեր ճանաչելու պահանջներով գործերով նախարարությունը չի ներգրավվում երրորդ անձ՝ տվյալ գործերով կայացվելիք դատական ակտերը վերջինիս լիազորություններին չառնչվելու հիմքով:

19 հունիսի 2019 թվականի N 790 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Տիգրան Խաչիկյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Խ-118-25.04.2019-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հունիսի 19
Երևան

Խ-118-25.04.2019-ՊԻ-011/0 *ՆԱԽԱԳԻԾ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

1) Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության 2013 թվականի դեկտեմբերի 05-ի օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը եւ 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

2) Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի միջակետը փոխարինել վերջակետով:

Հոդված 2.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը եւ խնդիրները.

Խնդրո առարկա իրավակարգավորումը գոյություն ունի Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) ընդունման պահից՝ 2013 թվականի դեկտեմբերից:

Այդ ժամանակվանից ի վեր վարչական դատավարության կարգով քննվել են տասնյակ հազարավոր գործեր: Այն վարչական գործերում, որտեղ որպես պատասխանող կողմ հանդես են եկել վարչական մարմինը կամ պաշտոնատար անձը, հայցադիմումի պատճենն ուղարկվել է նաեւ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն (այսուհետ՝ Ֆինանսների նախարարություն): Ընդ որում, քննվող վարչական գործերի մեծ մասում պատասխանող կողմը հենց վարչական մարմինն է կամ պաշտոնատար անձը: Ուստի մեծաքանակ հայցադիմումի պատճեններ ուղարկվում են Ֆինանսների նախարարություն:

Չնայած հատուկ վիճակագրության վարում այս մասով չի վարվել, ինչի մասին հայտնում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտը, ընթացքում կուտակված փորձը ցույց է տալիս, որ գրեթե ոչ մի գործով Ֆինանսների նախարարությունը չի ներգրավվում կամ շատ հազվադեպ է ներգրավվում քննվող գործերում որպես երրորդ անձ, բացառությամբ այն դեպքերի, երբ հենց Ֆինանսների նախարարությունն է հանդես գալիս պատասխանողի դերում: Արդյունքում ունենք իրավիճակ, որտեղ վարչական գործով հայցվորին ուղղված օրենսդրական պահանջը կա, նա այդ պահանջը կատարում է, քանի որ հակառակ պարագայում դատարանի կողմից հայցադիմումը կարող է հետ վերադարձվել, սակայն նրան ուղղված այդ պահանջը համաչափ չէ օրենսդրի՝ Ֆինանսների նախարարության տեղեկացված լինելու նպատակին: Արդյունքում, Ֆինանսների նախարարությունում ավելանում է փաստաթղթաշրջանառությունը, իսկ հայցվորը կրում է հավելյալ դժվարություն եւ ոչ համաչափ ծանրաբեռնվածություն՝ լրացուցիչ խոչընդոտներ հաղթահարելով դատական պաշտպանության իր իրավունքից օգտվելու համար:

Ավելին, հայցվորի համար պետության տարբեր գերատեսչություններին միեւնույն փաստաթուղթ ուղարկելը ենթադրում է գործողության կրկնօրինակում եւ հակասում մեկ սուբյեկտ համարվող պետությանը մեկ անգամ ծանուցելու կամ դիմելու տրամաբանությանը:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, անհրաժեշտ ենք համարում Օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություններ եւ ազատել հայցվորին հայցադիմումի օրինակը Ֆինանսների նախարարություն ուղարկելու պարտականությունից:

Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը եւ նույն հոդվածի 2-րդ մասը, ինչի արդյունքում հայցվորն անհարկի չի ծանրաբեռնվի միեւնույն փաստաթուղթը մեկ այլ գերատեսչություն ուղարկելու պահանջով, կազատվի անհարկի ֆինանսական եւ ժամանակային ծախսից:

Ֆինանսների նախարարությանն անհրաժեշտության դեպքում տեղեկացնելու հարցը կարելի է լուծել ներգերատեսչական հարաբերությունների շրջանակում՝ թողնելով այն ոչ թե հայցվորի, այլ պետական գերատեսչության վրա՝ նպատակին հասնելու առավել համաչափ միջոց օգտագործելով:

Ավելին, դատարանն ինքը կարող է ներգրավել Ֆինանսների նախարարությանը՝ որպես երրորդ անձ (Օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մաս), եթե նման անհրաժեշտություն առաջանա: